ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

0033, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 78, հեռ.՝ 060 469200, ֆաքս՝ 27 30 97, e-mail: info@yermetro.am

N 01 S «11» 05 2026 թ.

«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ» ՓԲԸ-Ի
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ-Ի

ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ

թիվ 01-S

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի, նույն հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված թիվ 1 հավելվածով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի և 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը՝ տալիս եմ պարտադիր կատարման ցուցում ստորև բերված աղյուսակում նշված մասնակից «Ամուր թիկունք» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝
ծածկագիրը	չափաբաժնի			Անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	հանգամանքների առաջացման ամսաթիվը			
	համարը	անվանումը	գնման գինը /ՀՀ դրամ/							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11

ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/31	2	Բազմաֆունկցիոնալ տպիչ սարք (A4, 35 էջ/րոպե արագության)	680,000.00	«Ամուր թիկունք» ՍՊԸ	01254768	Երևան Երևան Թախիրովի փ. 10	28.04.2026թ.	«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ	«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ, նույն հոդվածի 2-րդ մաս, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված թիվ 1 հավելվածով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետ և 42-րդ կետ	«Ամուր թիկունք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել էին անհամապատասխանություններ: Մասնավորապես՝ ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/31 ծածկագրով Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով ներկայացվող «Դիմում-Հայտարարություն» փաստաթուղթը, Հավելված 1.1-ով «Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր» փաստաթուղթը, Հավելված 1.3-ով «Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր» փաստաթուղթը ստորագրված են եղել այլ անձի կողմից, ում նման լիազորություններ վերապահված չեն եղել: Միաժամանակ Հավելված 1-ով ներկայացված «Դիմում-Հայտարարություն» փաստաթղթում մասնակիցը ցանկություն է հայտնել մասնակցելու 1-ին չափաբաժնին, սակայն eauction համակարգի միջոցով մասնակցության հայտ է ներկայացրել 2-րդ չափաբաժնին: Դրանով պայմանավորված և հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետի պահանջները, 2026 թվականի ապրիլի 23-ին Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Այնուհետև՝ 2026 թվականի ապրիլի 28-ին հանձնաժողովն արձանագրել է, որ գնահատող հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետներում «Ամուր թիկունք» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են հանձնաժողովի կողմից արձանագրված թերությունների շտկված տարբերակները, սակայն ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն եղել էլեկտրոնային-թվային ստորագրությամբ, դրանով թույլ տալով գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտում: Մասնավորապես՝ Հավելված 1-ով ներկայացվող «Դիմում-Հայտարարություն» փաստաթուղթը հաստատված չի եղել էլեկտրոնային-թվային ստորագրությամբ:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ Բ. ՍԵԴՐԱԿՅԱՆ

Կ.Տ.